



ՀՀ բնակահպանության նախարարություն



Empowered lives.  
Resilient nations.

# Ծրագրի հիմնական բաղադրիչները, աշխատանքային պլանը և Երկամյա զեկույցների մշակման նպատակը

*ԶԳ ազգային կադաստրի մշակման աշխատաժողով*

*Դիանա Հարությունյան  
ՄԱԶԾ կլիմայի փոփոխության ծրագրերի համակարգող*

*Ավիատրանս հյուրանոցի նիստերի դահլիճ,  
14 փետրվարի, 2017թ.*

# Ծրագրի նպատակը

Ծրագրի անմիջական նպատակն է աջակցել Հայաստանի Հանրապետությանը, որպես ՄԱԿ-ի կլիմայի փոփոխության մասին շրջանակային կոնվենցիայի կողմ երկրի՝ նախապատրաստելու և Կողմերի կոնֆերանսին ներկայացնելու Կոնվենցիայի պարտավորությունների կատարման վերաբերյալ Հայաստանի երկամյա առաջընթացի 2-րդ հաշվետվությունը և 4-րդ ազգային հաղորդագրությունը, ըստ սահմանված ժամկետների:


# Ծրագրի մյուս նպատակները

1. Աջակցել երկրին գնահատելու կլիմայի փոփոխությանն առնչվող հարցերը երկրի կայուն զարգացման ապահովման համատեքստում, ինչպես նաև ներառելու դրանք ազգային և ոլորտային զարգացման քաղաքականությունների մեջ
2. Ինստիտուցիոնալացնել ջերմոցային գազերի արտանետումների գույքագրման գործընթացը՝ տվյալների հավաքագրումն ու մշակումը և խթանել ազգային ու համայնքային մակարդակներում կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության գործընթացները
3. Նպաստել կլիմայի փոփոխության մասով կրթության և իրազեկության բարձրացմանը

# Ծրագրի հիմնական տվյալները

Ազգային իրականացնող մարմին	ՀՀ բնապահպանության նախարարություն
Իրականացնող գործակալություն	ՄԱԿ-ի զարգացման ծրագիր
Ֆինանսավորում, (ԱՄՆ դոլար)	Գլոբալ էկոլոգիական ֆոնդ՝ 852,000 ՀՀ կառավարություն (իրեդեն)՝ 500,000 ՄԱԶԾ՝ 75,000
Տևողությունը	2016 – 2020 (48 ամիս)
Համակարգում	Կլիմայի փոփոխության միջգերատեսչական խորհուրդ

# Կառավարման ձևաչափը



-----> Համագործակցություն  
 —————> Հաշվետվայնություն

# Ծրագրի իրականացման մոտեցումները

- Վերլուծել ներկա փուլում երկրի զարգացման գերակայությունների շրջանակներում կլիմայի փոփոխության խնդիրները
- Վերլուծել նախորդ զեկույցների մշակման ժամանակ բացահայտված բացերի և խոչընդոտների հաղթահարմանը միտված գործողությունների և ծրագրերի արդյունքները
- Հիմնվել երկրում իրականացվող ուսումնասիրությունների և հետազոտությունների արդյունքների վրա
- Համագործակցել նախորդ զեկույցների պատրաստման ժամանակ ներգրավված կառույցների և փորձագետների հետ

# Մոնիտորինգի և գնահատման պլան

- Հաշվետվություններ ըստ մոնիտորինգի և գնահատման պլանի`
  - Եռամսյակային և տարեկան հաշվետվություններ, (ՄԱԶԾ-ին, ԳԷՖ-ին և ՀՀ բնապահպանության նախարարությանը),
- Ծրագրի Ղեկավար Կոմիտեին տարեկան արդյունքների ներկայացում
- Ջերմոցային գազերի կադաստրի և հաշվետվության նախագծերի ներկայացում և քննարկում:

# Երկամյա զեկույցների միջազգային խորհրդատվության և վերլուծության (ICA) գործընթաց

*(Modalities and guidelines -2/CP.17;*

*Composition, modalities and procedures of the team of technical experts - 20/CP.19)*

## Տեխնիկական վերլուծություն

*իրականացվում է Կոնվենցիայի քարտուղարության կողմից ներգարվված միջազգային տեխնիկական փորձագետների թիմի կողմից*

Նախապատրաստական փուլ

Տեխնիկական քննարկման/պարզաբանման պատասխան

Տեխնիկական վերլուծություն

Կարողությունների հզորացման կարիքների նախնական բացահայտումներ

Տեսա/հեռա-կոնֆերանս, որի ընթացքում կքննարկվեն էլեկտրոնային ձևով ներկայացված նախնական բացահայտումները/առաջարկությունները

Տեխնիկական վերլուծության ամփոփ հաշվետվության նախնական տարբերակի ներկայացում

Տեխնիկական վերլուծության ամփոփ հաշվետվության վերջնական տարբերակի ներկայացում

## Արդյունքների ներկայացում և քննարկում

Կոնվենցիայի իրականացման օժանդակ մարմնի (SBI) ներքո, պաշտոնական նիստերի օրերին զուգահեռ հրավիրված աշխատաժողովում



# Բազմամյա աշխատանքային պլանը և վերջնաժամկետները

Գործողություն	2016	2017				2018				2019				2020		
	I	I	II	III	IV	I	II	III	IV	I	II	III	IV	I	II	III
Մեկնարկային փուլ																
2014թ. ՋԳ կադաստրի կազմում																
2-րդ Երկամյա զեկույցի կազմում																
2-րդ Երկամյա զեկույցի ներկայացում																
2016թ. ՋԳ կադաստրի կազմում																
4-րդ Ազգային զեկույցի գնահատումների իրականացում																
4-րդ Ազգային զեկույցի ներկայացում																
ԿՓ վերաբերող իրազեկման աշխատանքներ																

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ/ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	2016	2017			
	XII	ԵՌ. 1	ԵՌ. 2	ԵՌ. 3	ԵՌ. 4
<b>Իրականացման կարգավորում և Ծրագրի մեկնարկ</b>					
<b>1. ԵԱԶ նախապատրաստման համար համապատասխան ազգային պայմանները և ինստիտուցիոնալ կառուցվածքը թարմացված է,</b>					
1.1.2.Խորհրդակցություններ անցկացնել հիմնական շահառուների հետ՝ երկամյա առաջընթացի մասին հաշվետվության պատրաստման գործընթացում նրանց մասնակցությունն ու աջակցությունն ապահովելու նպատակով:					
1.1.4.Մշակել 2ԵԱՀ-ի «Ազգային պայմաններ» գլխի նախնական տարբերակը և «Խոչընդոտներ և բացթողումներ» բաժնի նախնական տարբերակը:					
<b>2. ՋԳ ազգային կադաստրը թարմացված է 2013, 2014թթ. համար և գործունեության տվյալների հավաքագրման կարողությունները շարունակաբար հզորացված են</b>					
2.1. Կադաստրի կազմման աշխատանքների նախապատրաստում և տվյալների հավաքագրում					
2.8.Հաշվարկել անորոշությունները և մշակել կադաստրի համապատասխան ենթազույգը: Մշակել և իրականացնել կադաստրի որակի հսկողության և որակի ապահովման գործընթացը և կազմել համապատասխան ենթազույգը:					
2.10. ՋԳ կադաստրի մշակման բոլոր քայլերը Փաստագրված են և արխիվացվել են:					

<b>3. Կլիմայի փոփոխության մեղմմանն ուղղված քաղաքականության և միջոցառումների մասին հաշվետվությունը 2014-2016թթ. համար</b>					
3.3. Հավաքագրել 2012-2014թթ. իրականացված մեղմման գործողությունները քաղաքացիներից և տարբեր գերատեսչություններից: Ազգային մեղմման թիմին վերապատրաստել LEAP համակարգչային ծրագրի կիրառման համար:					
3.5. Վերանայել 1ԵԱՀ դիտարկված բազային գիծը և մեղմման սցենարները և մշակել մինչև 2030թ. ՋԳ արտանետումների թարմացված սցենարները՝ դիտարկելով առկա քաղաքականությունը և և տեղի ունեցած փոփոխությունները :					
3.6. Մշակել մեղմման գործողությունների բաժինը: Գնահատել ՋԳ արտանետումները LEAP համակարգչային ծրագրի կիրառմամբ:					
<b>5. Աջակցություն է ցուցաբերված տեղական Չափումների, հաշվետվայության և հավաստագրման (ՉՀՀ) համակարգի ներդրմանը</b>					
5.1.1. Մշակել 2ԵԱՀ –ի «ՉՀՀ համակարգ» բաժինը					
<b>5.2. Ֆինանսական ռեսուրսներ և ստացված տեխնիկական աջակցություն</b>					
5.2.3. Մշակել 2ԵԱՀ –ի « Ֆինանսական ռեսուրսներ և ստացված տեխնիկական աջակցություն» բաժինը					
<b>6. 2ԵԱԶ մշակված է 2ԵԱՀ-ը և «Ամփոփագրի» նախագիծը</b>					

# ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Էլ.-փոստ՝ [climate@nature.am](mailto:climate@nature.am)  
Վեբկայք՝ [www.nature-ic.am](http://www.nature-ic.am)